

## «ՔՐԻՍՏՈՍԻ ԳԵՐԵՉՄԱՆԻ ԿՆՔՈՒՄԸ» ՀԵԹՈՒՄ Բ ԱՐՔԱՅԻ ՃԱՇՈՑՈՒՄ

### ԷՄՍԱ ՉՈՒԳԱՍՁՅԱՆ

1286 թվականի՝ Հեթումի Բ-ի ճաշոցի (Մատենադարան, համար 979) մանրանկարների աննախադեպ հորինվածքները ժամերգության ժամանակ ընթերցվող աստվածաշնչյան տեքստերի ներկայացումներ են: Այդ պատկերների խորհուրդն ու նշանակությունը հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչ ընթերցվածքներ են ընդգրկվում ժամերգության գլխավոր գիրքը համարվող ճաշոցում: Մեզ հետաքրքրող մանրանկարը՝ «Քրիստոսի գերեզմանի կնքումը», Հեթում Բ-ի ճաշոցի Ավագ Շաբաթվա ընթերցվածքի ձևավորումներից է: Այստեղ պատկերված են դեպքեր, որոնք կատարվել են Ավագ Ուրբաթի և Ավագ Շաբաթի միջև: Առանձնահատուկ պատկերագրությամբ այս ձեռագրում հանդիպում են այնպիսի պատկերներ, որոնք չունեն նախօրինակներ ո՛չ հայ արվեստում և ո՛չ էլ արևմտյան կամ հունական: Այդպիսի տեսարաններից է «Քրիստոսի գերեզմանի կնքումը» ներկայացնող լուսանցապատկերը (տե՛ս պատկերը):



Մատթեոսի Ավետարանում ասվում է, որ աստվածամարտ հրեաները ժողովվեցին Պիղատոսի մոտ ու ասացին, որ երեք օրով պահապան զինվորներ կարգեն գերեզմանի վրա, որպեսզի Յիսուսի աշակերտները հանկարծ չգան ու չգողանան Նրա մարմինը և ասեն, թե հարություն է առել: Պիղատոսը նրանց ասաց. «Գնացեք և պահպանեք գերեզմանն այնպես, ինչպես գիտեք: Եթե այդպես վախենում եք այդ «Անօրենից» և «Աստծուն հակառակից», ապա զինվորներով պաշտպանվեք այդ սոսկալի Մեռելից, և եթե հարկ կա, կնքեցեք գերեզմանը կնիքով, և եթե անհրաժեշտ եք գտնում, երկաթյա շղթաներով ամրացրեք, որպեսզի հետո չասեք, թե դատավորը մեզ

թույլ չտվեց պահպանել գերեզմանը և այդ պատճառով մենք կորցրեցինք Մեռելին»<sup>1</sup>:

Մահն էլ իր հերթին կամենում էր իր ապականող ատամներով ծամել Տիրոջ Մարմինը, սակայն չէր կարողանում: Դրանից զարմացած նա՝ խորհում էր՝ ինքն իրեն ասելով. «Ով է Սա, որ Օրենքով մեռել է, սակայն վեր է քան Օրենքը և անապական է մնում: Աստված չէ՛, քանզի եթե Աստված լիներ, ապա չէր մահանա: Հրեշտակ չէ, քանզի մարդկային կերպարանք ունի: Ադամի նման ենթակա է ինձ, սակայն Ադամի նման ապականությանը ինձ չի հանձնվում: Ինչպես մարդ համբերեց մահվան, սակայն մարդու նման, մահվանից հետո, չի կրում մահկանացուի կրքերը»<sup>2</sup>:

Հրեական Շաբաթի օրը իրենց աղոթքներն անելու փոխարեն քահանայապետներն ու փարիսեցիները մի խումբ զինվորների հետ հանձն առան հոգալու գերեզմանի ապահովությունը. վենը կնքեցին Պիղատոսի կնիքով, ինչպես որ այն գբի դուռն էին կնքել թագավորի կնիքով, ուր նետել էին Դանիելին:

Ձեռագրի էջի ձախ հատվածի վերնամասը զբաղեցնող այս բավականին մեծ լուսանցապատկերը արտահայտում է Սուրբ Շաբաթի ընթերցվածքը և ներկայացնում է Տիրոջ գերեզմանի կնքումը: Առաջին հայացքից տեսարանը շփոթություն է առաջացնում, քանզի բացակայում է պարտեզի կամ քարանձավի պատկերումը, որի փոխարեն մենք տեսնում ենք մի աշտարակավոր շինություն՝ չորս սյուների վրա բարձրացված տաղավարիկով, որը բյուզանդական արվեստի մեջ հայտնի է սիբորիոն, իսկ ուշ միջնադարում՝ բալդաքին անունով: Հատկանշական է, որ սիբորիոնը խորհրդանշում է Գողգոթան և կապվում է զոհաբերության հետ<sup>3</sup>: Բյուզանդական եկեղեցիների հարդարման մեջ այն օգտագործվել է որպես խորանի ծածկ, որի մեջտեղում կանգնում էր քահանան պատարագ մատուցելիս: Առանձին դեպքերում սիբորիոններով էին ծածկվում սրբերի, հետագայում նաև կայսրերի գերեզմանները: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ հայկական ճարտարապետության կամ եկեղեցական հարդարանքի մեջ օգտագործված սիբորիոնները չեն պահպանվել: Հնարավոր է, որ Կիլիկիայի հայկական թագավորության պալատական մատուռներում կամ եկեղեցիներում գոյություն են ունեցել սիբորիոններ, որոնց մասին կարելի է ենթադրություններ անել միայն մանրանկարների մեջ պահպանված պատկերով:

Մեր քննության առարկա լուսանցազարդում պատկերված սիբորիոնի վերին հատվածի՝ տաղավարիկի վեղարածն զագաթը զարդարված է ականթի տերևներով:

Գերեզմանի հիմքում դրված է մի մեծ քար, որի վրա կանգնեցված են գերեզմանը և այն ծածկող սիբորիոնը: Կարելի է ենթադրել, որ քարը խորհրդանշում է Գողգոթան, որի վրա խաչվեց Քրիստոսը:

Բացառված չէ նաև, որ լուսանցապատկերի հեղինակը փորձել է պայմանականորեն պատկերել «Սուրբ գերեզմանի» վրա կառուցված Հարության տաճարը, քանզի մանրանկարներում պատկերվող վեղարածն զմբեթով նման շինությունները համարվում էին Հարության տաճարի խորհրդա-

<sup>1</sup> Մատթեոս, ԻԷ, 57-61:

<sup>2</sup> Մատթեոս, ԻԷ, 62-66:

<sup>3</sup> Տե՛ս **Mark Joseph Johnson, Robert G. Ousterhout, Amy Papalexandrou**, Approaches to Byzantine Architecture and Its Decoration: Studies in Honor of Slobodan Curcic, Burlington, USA, 2012, էջ 34:

նիշեր<sup>4</sup>: Ըստ ավանդույթի՝ այն կառուցվել էր ճիշտ Գողգոթայի վրա: Քանի որ Խաչելությունից և Հարությունից հետո Քրիստոսից մնացած տեսանելի կարևոր առարկաներից էին Քրիստոսի դատարկ գերեզմանն ու խաչելության Խաչը, ուստի հենց դրանց վրա կենտրոնացան քրիստոնյաների ուշադրությունը, հարգանքն ու հոգածությունը: Ավանդությունը պատմում է, որ Հռոմի Կլավդիոս կայսեր (41-54 թթ.) կինը՝ Պատրոնիկեն, լինելով քրիստոնյա, ուխտի է գնում Երուսաղեմ, որտեղ հանդիպում է այդ ժամանակ Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Տյառնեղբայր Հակոբոս առաքյալին: Կայսրուհին փափագում է տեսնել Քրիստոսի գերեզմանը, խաչափայտը և Գողգոթան, սակայն Հակոբոս առաքյալից տեղեկանում է, որ հրեաները Քրիստոսի Խաչը և Նրա հետ խաչ բարձրացված երկու ավազակների խաչերը ծածկել էին հողով՝ հսկելով ու արգելելով մոտենալ դրանց: Պատրոնիկե կայսրուհու միջամտությամբ խաչերը հանում են հողի տակից, և որոշելու համար, թե որն է Քրիստոսինը, դրանց են մոտեցնում մահացած մի աղջկա: Վերջինս Քրիստոսի Խաչի հպումից կենդանանում է: Հակոբոս Տյառնեղբայրը, բոլորին ի տես և ի մխիթարություն, Խաչը բարձրացնում է Երուսաղեմի տաճարում: Պատրոնիկե կայսրուհու խնդրանքով Հակոբոս Տյառնեղբայրը նրան է նվիրում Խաչից մի մաս, որը կայսրուհին տանում է Հռոմ: Նվիրական Խաչափայտի անգին այս մասունքը հետագայում անցնում է նրա ազգականուհի Հռիփսիմեին, և վերջինս իր հետ այն բերում է Հայաստան<sup>5</sup>: Կլավդիոս կայսեր և Պատրոնիկե կայսրուհու մահից հետո հրեաները սպանում են Հակոբոս Տյառնեղբորը և Քրիստոսի Խաչը մյուս խաչերի հետ թաղում Գողգոթայի մոտակայքում, վրան աղբ կուտակում՝ վայրը վերածելով աղբանոցի: 313 թ. Կոստանդիանոս Մեծ կայսեր (305-337 թթ.) Միլանի հրովարտակով թուլատրվում է ազատորեն դավանել քրիստոնեությունը: Կայսեր մայրը՝ Հելինեն, 327 թ. գալիս է Երուսաղեմ և, մեծ ջանքեր գործադրելով, ցանկանում գտնել Քրիստոսի Խաչը: Խաչափայտի տեղը հայտնի էր միայն Հուդա անունով մի հրեայի, ով իր նախնիների գրավոր ավանդություններից գիտեր խաչերի թաղման վայրը: Սկզբում ընդդիմանում է, բայց վեց օր ցամաքած ջրհորի հատակում քաղցած մնալուց հետո՝ նա ի վերջո ցույց է տալիս խաչերի թաղման տեղը: Փորելով դրանք հանում են աղբի տակից, և գտնվում է անգամ Պիղատոսի հրամանով Հիսուսի գլխավերևում ամրացված եռալեզու տախտակը: Հեղինե թագուհին 335 թ. Գողգոթայում կառուցում է Սուրբ Հարության տաճարը, որտեղ և կանգնեցվում է Քրիստոսի Խաչը՝ այն հանդիսավորապես փառավորվելով արդեն երկրորդ անգամ<sup>6</sup>:

Մեր քննության առարկա լուսանցազարդում գերեզմանը կնքում է քահանայապետը, իսկ զինվորները շարվում են այն պահպանելու համար: Մանրանկարիչը բավականին արտահայտիչ է պատկերել քահանայապետի կերպարը. նրա դեմքին արտացոլված է և՛ դաժանություն, և՛ վախ, և՛ անհանգստություն: Թևքերը վեր բարձրացրած՝ կքած գերեզմանի վրա նա խստադեմ և իր գործի կարևորությունը գիտակցողի վայրագությամբ հապշտապ կնքում է գերեզմանը: Գերեզմանի վրա ակնհայտորեն տեսա-

<sup>4</sup> Տե՛ս **E. Guldán**, *Et verbum caro factum est*, 1998, Paris, էջ 147:

<sup>5</sup> Տե՛ս «Գյուլտ խաչի տոն», <http://ter-hambardzum.com/news/2012-10-28-1276>

<sup>6</sup> Տե՛ս **S. Kochav**, *The search for a Protestant Holy Sepulchre: the Garden Tomb in nineteenth-century Jerusalem*, “The Journal of Ecclesiastical History”, April 01, 1995:

նելի են չորս կողմը շարված մոմե կնիքները՝ կարմիր պարաններով:

Մանրանկարիչը կարողացել է վարպետորեն տեսանելի դարձնել ընդհանուր խուճապի և անհանգստության շարժումը, որը քահանայապետից փոխանցվում է զինվորներին: Նրանց դարանակալող անհանգիստ շղթան բնորոշվում է դեմքերի անհանգիստ արտահայտություններով և մարմինների ոչ հաստատուն դիրքերով: Մանրանկարի ստորին ձախ մասը վնասված է. այդ հատվածում պատկերված երկու զինվորները նստած երկխոսում են, ինչի մասին է վկայում առջևի զինվորի գլխի՝ ետ պտտված դիրքը: Ձեռագիրը առավել մանրամասն զննելու դեպքում կարելի է նկատել, որ այդ երկու զինվորների ետևում նշմարվում են ևս չորս զինվորի գլուխներ:

Գունային առունով առանձնանում է երեք երանգ՝ կարմիր, կապույտ և ոսկեգույն: Ի դեպ, այս գույների եռաշերտ հաջորդական համադրումը օգտագործված է ընդգծելու, շաղկապելու և միևնույն ժամանակ զատելու ընդհանուր եռանկյունաձև կոմպոզիցիայի տարբեր հատվածները: Այսպես, գերեզմանի կապույտ տուփը, ուղիղ անկյուն ստեղծելով քահանայի կապույտ զգեստի հետ, այնուհետև հավասարակշռվում է սիբորիոմի տանիքի կապույտով: Գերեզմանի կափարիչի կարմիրը կիսաշրջագծով կապվում է քահանայապետի թիկնոցի հետ և այնուհետև հավասարակշռվում սյուների խոյակների կարմրով: Ոսկեգույնը օգտագործված է կոմպոզիցիայի ծանրակշիռ և մուգ հատվածները հաջորդաբար թեթևացնելու աստիճանակարգով:

Ակներև է ծավալային-տարածական որոշ հարթություններ ստեղծելու միտումը: Այսպես, գերեզմանի սեղանաձև պատկերը արձագանքում է սիբորիոմի առաջին տանիքի համանման պատկերի հետ՝ ստեղծելով հակադարձ հեռանկարի վեր խոյացող և միևնույն ժամանակ դիտողին ուղղված տարածական հարթությունների զուգակցում: Նրանց միջև առկա ոսկու շերտի ջրբաժանը և նուրբ սյուների շարանը սրում են այս հատվածի խորքային թեթևությունը և ոսկեգույնի միջոցով անդրադարձի տպավորություն ստեղծում:

Հատկանշական է, որ Նիկողեմոսի բերած մոտ հարյուր լիտր զմուռսը՝ հալվեի հետ խառնված, մոգերի խորհրդավոր ընծան էր, որը նրանք բերել էին Հիսուսի ծննդյան օրը: Ծիշտ այդ զմուռսով էլ կնքվեց Տիրոջ գերեզմանը<sup>7</sup>: Ձմուռսը նշանակն է անապական Մարմնի, անուշահոտ հալվեն՝ Աստվածության<sup>8</sup>: Ձմուռսը նաև թաղումն է խորհրդանշում, իսկ հալվեն՝ հարությունը<sup>9</sup>:

Ավագ Շաբաթը, որի ընթերցվածքի ձևավորումն է այս լուսանցապատկերը, խորհրդանիշն ու օրինակն է արարչության յոթերորդ օրվա, երբ Աստված հանգստացավ Իր բոլոր գործերից: Անցած օրերն Աստված պատվեց արարչությամբ, իսկ այս օրը՝ օրհնությամբ ու սրբությամբ: Նա օրենք տվեց եբրայական տոհմին՝ վեց օր գործել իրենց մարմնական կարիքների համար և յոթերորդ օրը հանգստանալ:

Պատվիրեց նաև քննել անցած վեց օրերում իրենց կատարած գործերը և գործած սխալները, խոստովանելով ու ողորմություն տալով՝ քավություն գտնել<sup>10</sup>: Ինչպես Քրիստոս շաբաթ օրը հանգստացավ գերեզմանում, այդպես էլ Իր արարածներին հանգստացրեց մահվան մեջ՝ ասելով. «Մահը

<sup>7</sup> Տե՛ս Հովհ., Գ, 22:

<sup>8</sup> Տե՛ս Արամ Դիլանյան, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տոները, (տոնախոսական ժողովածու), տերունական տոներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, էջ 201:

<sup>9</sup> Տե՛ս E. Guldan, նշվ. աշխ., էջ 134:

<sup>10</sup> Տե՛ս Արամ Դիլանյան, նշվ. աշխ., էջ 202-203:

մարդու համար հանգիստ է»<sup>11</sup>: Իսկ Ավագ Շաբաթ օրը խորհրդանշում է Նոր օրենքի հանգիստը հին ու մարմնավոր օրենքի չարչարանքներից հետո, ինչպես նաև՝ արդարների հանգիստը մահվանից հետո: Հեթումի ճաշոցի «Քրիստոսի գերեզմանի կնքումը» լուսանցանկարում պատկերված է Արդարի և անարդարների հակադրությունը, երբ զինվորներն ու քահանայապետը, անտեսելով Շաբաթ օրվա սրբությունը, անարգում են այն իրենց անարդար գործով, իսկ Քրիստոս ննջում է իր մահճում՝ սպասելով Հարության Կիրակիին:

Իսկ այն խոսքը, թե «Մարդու Որդին երկրի սրտում պետք է լինի երեք օր ու երեք գիշեր», նշանակում է Քրիստոսի գերեզմանը: Երկրի սիրտը Երուսաղեմն է: Ինչպես Աբելի սպանվելու տեղը երկրի բերան կոչվեց, այդպես էլ Քրիստոսի գերեզմանը՝ երկրի սիրտ<sup>12</sup>:

Հեթում Բ-ի ճաշոցի այս աննախադեպ լուսանցապատկերը ապացուցում է կիլիկյան ձեռագրի բացառիկությունը ինչպես հայ, այնպես էլ արևմտյան արվեստում: «Քրիստոսի Գերեզմանի կնքումը» ճաշոցը նկարագրող վարպետների կատարողական հմտության վառ ապացույցն է:

**ЭММА ЧУГАСЗЯН – *Опечатывание Гробницы Христа в Лекционарии царя Хетума II.*** – В статье исследуется одна из наиболее ярких маргинальных миниатюр в Лекционарии киликийского царя Хетума II (Ереван, Матенадаран, № 979). Это одна из самых роскошных и таинственных армянских рукописей, изучение которой прошло несколько этапов – теологический, иконографический и исторический.

Учитывая, что рукопись относится к Лекционарию, мы должны были найти связь литургических текстов с украшающими их изображениями. Каждый из текстов соответствует какому-либо христианскому празднику, так что нам предстояло разъяснить значение этих праздников. Исследуемая миниатюра открывает лекцию о Святой субботе. На ней запечатлено, как евреи опечатывают Гробницу Христа. Гробница Господня изображена в виде увенчанного башенкой архитектурного сооружения над собственно надгробием, к которому прикладывает печать первосвященник, а возле гробницы стоят охраняющие её стражники.

**EMMA CHOOKASZIAN – *The Sealing of Christ's Sepulcher in King Hetoum 2<sup>nd</sup>'s Lectionary.*** – This article contains the study of one of the most outstanding marginal illustrations in a 13th century manuscript of Armenian Kingdom of Cilicia, which is the Lectionary commissioned by King Hetoum II (Yerevan, Matenadaran collection, № 979). This is one of the most luxurious and mysterious Armenian manuscripts the examination of which is going to take several stages: theological, iconographical and historical. Taking into consideration the fact that this manuscript is a Lectionary, we had to find the connection of the liturgical texts with the images decorating them. Each of these liturgical texts corresponds to one of the Armenian religious feasts, so our duty was to find the explanation and the meaning of those feasts. This small headpiece is opening the lection of Holy Saturday and is showing the Jews sealing Christ's Sepulcher.

The author of the illustration represents the sepulcher as a towered architectural construction above the tomb stone itself. This construction is very much like Byzantine baldachins. The tomb is being sealed by the chief priest while several guards, arranged near the basis of the sepulcher, are going to secure it.

<sup>11</sup> Հոր., Գ, 22 :

<sup>12</sup> Տե՛ս Արամ Դիլանյան, նշվ. աշխ., էջ 202-203: